

Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

THE CITIZEN.

ՖՐԷՉՆՕ, ՔԱՆԻՅՕՐՆԻԱ.

ՄԱՐՏ 26, 1909

ԿԻՆ 5 ՄԷՆԹ.

ՀԱՄԵՐԱՇԵՆՆԵՐԻ ԺԱՄԸ

ՍՍՄԱՆԵԱՆ Սահմանադրութիւնը որ սրինգով ու թմբուկով ողջագուրեցինք քանի մը ամիսներ առաջ, սկսած է մեզ յուսախար ընել: Այն եղբայրութեան դաշինքը որ կնքուեցաւ Հայոցն ու Թիւրքին մէջ, մեր ՅԱՐԳ յօդուածին նման ջուրն ինկած կը թուի: Քանզի Թիւրքը անկեղծ չէր. անոր եղբայրութեան դիմակին տակ դեռ հին Տաճիկը պահուած կար:

Արդի կառավարութիւնը որ Երիտասարդ Թիւրք տարբը կը ներկայացնէ, իր ցուրտ վարմունքով բաւական ատենէ ի վեր չօշափելի ապացոյցներ տուած էր մեզ այս մասին. իսկ անոր արդի ընթացքը որ ատելութեան երեւոյթ առնել սկսած է արդէն, ամէն կասկածէ վեր է ինքնին: Կռիւլ տակաւին խուլ է անշուշտ, բայց անոր ապացոյցները Թրքահայ մամուլին մէջ արձանագրուած կը գտնենք շարունակ: Արդարեւ անոնք շատ քիչ կամ ոչինչ կը գրեն այս խնդիրներու ներքին նշանակութեանց վրայ, և չենք ալ կրնար ակնկալել անոնցմէ անկախ ու անվախ բացատրութիւններ, վասնզի կարելի չէ հաւտալ թէ մամուլը—Հայ մամուլը մանաւանդ— ազատ է հոն բառին Ամերիկեան նշանակութեամբ: Երբ մարդ ուշի ուշով կարդայ Պօլսոյ Հայ Թերթեր՝ պիտի տեսնէ թէ անոնք այն ատեն միայն կը համարձակին քննադատել կարեւոր կէտ մը՝ երբ այդ մասին Թիւրք Թերթեր գրած ու գաղափար յայտնած են արդէն: Պիթիւրի խնդիրը, որ կը դառնար Արշակի, Մաղպատի և ուրիշներու բոլորտիքը, և որը կարեւոր միջոցէ պ մըն էր, տակաւին ոչ մէկ Հայ Թերթի կողմէ խորունկ քննադատութեան ու բացատրութեան նիւթ է դարձեր. ինչո՞ւ. որովհետեւ անոնց բերանը սանձ կայ: Թիւրք մամուլն է ազատ՝ երբ նա կառավարութեան կէս պաշտօնական բերանը ըլլալ կը սիրէ:

Այսպիսի շատ մը միջոցէպէս կուզան շեշտելու սա կարեւոր պարագան թէ Հայն ու Թիւրքը դեռ շատ պիտի բաղխին իրարու, և թէ Թուրքիոյ մէջ յեղափոխական գորաւոր շարժումներու պէտք պիտի ունենանք մեր գոյութիւնը և իրաւունքները պահել կարենալու համար: Այս պէտքը զգալով է որ Պօլսոյ մէջ օրուան խնդիր է հիմա Յեղափոխական միացեալ ու գորաւոր մարմին մը ունենալու հարցը: Հոն տակաւին ազգային ներքին շրջանակներու մէջ ոգի ի բռին կաշխատին այս մասին, քանզի Հայ Յեղափոխական բոլոր մարմիններ ժամանակ է որ մէկ դրօշի տակ գան ու ամէն անձնական հաշիւ մէկ կողմ դրնելով ապագայ գործունէութեան պատրաստուին:

Թէև Պօլսահայ մամուլը շատ բան չի կրնար ըսել մեզ այս մասին, բայց մենք ՚իւպէն ՚իւպէսի՝ հասկնալու պարզ ճարտարութիւնը ունենալու ենք անշուշտ: Հոն հրապարակային փորձեր չեն ըլլար և չեն կրնար ըլլալ, և շուտով պիտի գայ օրը թերևս երբ Հայ գրիչը քիչ մը աւելի ամուր կապանքներու ներքեւ դրուի. բայց արտասահմանի մամուլը կրնայ չշատ կարեւոր դեր մը խաղալ. մենք հոս սկսելու ենք համերաշխութեան փրօփաքանտան, որ հարթ ճամբու մը վրայ ելած է արդէն: Բաւականէն շատ աւելի կուտեցանք, մեր կուսակցական կռիւներ շատ մը անմեղ արիւնով յաւիտենական զոհանքի առարկայ ըրինք, սխա-

լեցանք, իրար չի հասկցանք, թող սուսինք որ կիրքերը արեան մէջ հագուրդ գտնեն, և եղաւ ատեն մը որ ազգային ամեն շահ վտանգի ենթարկեցինք. բայց քանի որ Օսմ. Սահմանադրութիւնը քիչ մը լայն ճամբայ բացաւ ժողովրդեան առջև՝ իմաստութիւն ունենանք այդ ճամբայէն դէպի մեր նպատակը քալելու միութեամբ: Կրնա՞յ մէկը ըսել հիմայ ամենայն լրութեամբ՝ թէ ի՞նչ է Հայ կուսակցութիւնները բաժնող այն կարևոր կէտը որ կրնայ իրական արգելք մը նկատուիլ ու անլուծանելի կրնա՞ծիւ մը: Եթէ անձնականութիւնը և կոյր ատելութիւնը մէջտեղէն վերնայ՝ համերաշխութիւնը կնքուած կըլլայ անմիջապէս: Մեր մատնեւուն վրայ կրնանք համբել թերևս անունները այն անձանց որոնց անհատական հաշտութիւնը կրնայ կուսակցական ընդհանուր համերաշխութիւն յառաջ բերել:

Կուսակցական շարքերը, խումբերը, մասնաճիւղերն ու կօմիտէները այս մասին շատ կարևոր դեր կրնան կատարել: Հերիք է քանի մը անհատներու անձնական անհամաձայնութեանց գերի ըլլանք: Համերաշխելու պատեհ առիթը ներկայացած է. օղտուինք անկէ:

(Նոր Սերունդ)

ԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅԻՍ

Ճ. Ն. Ըսփրաւզ — Ֆրէզնօի վեցերորդ ուօրտէն Սիթի Թըրըսթիի թեկնածու է Ճ. Ն. Ըսփրաւզ: Սան Ուօրին դաշտին մէջ ամեն անոնք որ Պիլնիս Քալէճ Երթալու առիթը կամ ուէ կերպիւ յարարութիւն ունեցած են հոս անոր անսրէնութեան հետ, Ըսփրաւզը մօտէն կի ճանչնան ու կը սիրեն, քանզի նա եղած է տեսուչն ու վարող հողին այդ հաստատութեան 11 երկար տարիներ: Անոր դպրոցին ընթացաւարտներն կը գտնենք այսօր ամեն տեղ, որոնց մէջ քանի մը Հայեր ալ կան բարերազգարար: Անցեալ տարի Յուլիսին սակայն Ըսփրաւզ նոր ասպարէզի մը մէջ մտաւ և անով կը պարապի հիմայ: Յաջող փաստարան մ'է այժմ ինք:

Յառաջդիմական, անկախ և լուսամիտ թեկնածու մըն է սա անձ, որ եթէ ընտրուի՝ պիտի կրնայ պատիւ բերել պաշտօնին: Երկարատեւ փորձառութիւնը անոր և դաստիարակութիւնը կը յարմարցնեն զինքը Թըրըսթի մը ըլլալու:

Ըսփրաւզ համակիր է Հայոց և կը փափաքի անոնց քուէն ստանալ իր ձգտած պաշտօնին հասնելու:

Պ. Մ. Հէկ, որդի — Հինգերորդ ուօրտէն Սիթի Թըրըսթիի համար ընտրելի է այս անձ: Չէ՞ք ճանչնար զայն:

Հէկ քսան տարի առաջ Արքանսոէ Ֆրէզնօ եկած ու հաստատուած է հոս. Դահած է ժողովրդի համակրութիւնը ու պատուաւոր դիրք մը բռնած է անոր մէջ: Հէկ 13 տարի նպարավաճառութեամբ զբաղեցաւ հոս, հինգ տարի անօրէն եղաւ Ռաչտէլ ընկերութեան և հիմայ խոտի ընդարձակ դործ ունի Ճէյ փողոցի վրայ: Կեթոտական եկեղեցւոյ անդամ է ինք և յառաջացած Սէյսըն մը որ խոտի չի դներ ազգութեանց մէջ: Իր բազմաթիւ հայ բարեկամները այս մասին կը վկայեն անշուշտ:

Եթէ Հէկ ընտրուի իր ձգտած պաշտօնին՝ պիտի ջանայ քաղաքիս տալ յառաջդիմական մարտը կառավարութիւն մը: Անկախ ընտրելի մըն է ինք. ժողովրդեան կամքին ծառան ու գոր-

ծաղրիչը պիտի ըլլայ սըլունի խնդրոյն մէջ: Սա առաջին անգամն է որ այս թեկնածուն պաշտօնի կը ձգտի՝ իր գրացիներու ու բարեկամներու մասնաւոր թախանձանօք. և եթէ յաջողի՝ իր քաղաքականութիւնը պիտի ըլլայ ծառայել ամբողջ քաղաքին:

Իր բաղմաթիւ հայ բարեկամաց աջակցութեան կը դիմէ Հէկ ու անոնց քուէն կը խնդրէ: Յիշէ զայն Ապրիլ 12ին:

Ու. Հ. Թըքքըր.— Ֆրէզնօի երրորդ շրջանակէն թեկնածու ներկայացած է այս ծանօթ քաղաքացի Սիթի Թըքքըրի համար: Այս առաջին անգամն է որ Թըքքըր պաշտօնի կը ձգտի, և այդ իր բարեկամներու և գրացիներու ստիպման վրայ: Անկախ ընտրելի մըն է ինք՝ բառին բովանդակ նշանակութեամբ: Իր նպատակն է ծառայել Ֆրէզնօի ժողովրդեան որուն մէջ բնակած է 30 տարի և որուն ծառայելու բարոյական պարտականութիւն մը ունի: Ո՛չ պաշտօնին վարձատրութիւնը և ոչ ալ անոր պատիւը կրնային զայն հրապարակ հրապարակ նետուելու: Յաւազդիմական փորձառու մարդ է ինք որ խօսիր չը գներ սպերու մէջ: Եստ Հայեր զայն կը ճանչնան մօտէն ու կը յարգեն զինքը՝ բառին ի նշանակութեամբ: Սըլուններու սաք խնդրոյն մէջ իր գերբը բոլորովին անկախ է. ժողովրդեան անկ է վճռել զայն. և ինչ որ անոր կամքն ըլլայ՝ իր ալ պաշտօնը պիտի ըլլայ գործադրել զայն:

Հայք իրենց քուէն Թըքքըրի տարով՝ բարեկամի մը և հասակիրի մը օգնած կըլլան:

Ճ. Ս. Փաթըլ.— Քաղաքիս հայ Մէյքընները շատ մօտէն կը ճանչնան այս թեկնածուն որ կը ձգտի Չրդ Ուօրթէն Սիթի Թըքքըր ընտրուելու: Ութը տարիէ ի վեր տիւթրիքթ Ինսիթրիթ է Մասնական կազմակերպութեան այս ընդարձակ շրջանակին համար: Սիրուած է ոչ միայն Մէյքըններէն այլ և ընդհանուր ժողովրդէն իր բնասիրութեան և նկարագրին համար: Փաթըլ 32 աստիճանի Մէյքըն է: Ֆրէզնօ եկած է արեւելքէն 20 տարի առաջ՝ հոն 25 տարի չափ գպրոցական գործերով զբաղելէ և 8 տարի հաշտարար դատաւորի պաշտօն վարելէ վերջ: Աւելորդ է ըսել թէ Փաթըլ Հայոց դէմ ո և է հակակրօթիւն չունի. քանզի Մէյքընութեան մէջ այդ բարձր արժանիքին հասնող մէկը չի կրնար հակակրօթիւն ունենալ ո և է ազգի կամ ցեղի դէմ: Հայերը կը նկատէ այս դաւառի գարգացման ազդակներէն մին և մեծ յոյս ունի անոնց ապագային վրայ: Սըլունի խնդիրը երկրորդական հարց մը կը նկատէ. Ժողովրդի որոշելիք մէկ խնդիրն է այն. և ինք պատրաստ է հանրութեան կամքը յարգել բոլորին բուն նշանակութեամբ:

Եթէ Հայ քուէն կեդրոնանայ այս թեկնածուն վրայ՝ անոր ընտրութիւնը ապահովուած կը նկատուի, և եթէ Հայերը անոր ընտրութիւնը ապահովցնեն՝ վերին աստիճանի ազատամիտ և անկողմնակալ մէկը ընտրած կըլլան Թըքքըրիներու ժողովին անդամ:

Ճ. Ս. Փաթըլ Հայոց քուէն կը խնդրէ:

Կրանդ Ֆօլքընսթին.— Քաղաքացիի ընթերցողներուն մօտէն ծանօթ է այս թեկնածուն որ կը ձգտի քաղաքիս վեցերորդ ուօրթէն Սիթի Թըքքըր ընտրուելու: Չորս տարի առաջ Կրանդ ութերորդ ուօրթէն Թըքքըր ընտրուեցաւ չորս թեկնածուներու մէջէն: Չօրաւոր մրցակիցներ էին անոնք. Բրեն դէմ, բայց իր ստացած քուէն երկու հարիւրի չափ առաւելութիւն ունէր ամենէ աւելի յաջող թեկնածուն ստացածէն: Թէ իր պաշտօնավարութիւնը յաջողութիւն մը եղած է՝ աւելորդ է շեշտել, զի քաղաքիս մէջ չ'կայ մէկը որ տեղեկութիւն չունի այդ մասին: Այս չորս տարուան մէջ ծառայեց Կրանդ շարունակաբար տպագրութեան և շէնքերու ինչպէս նաև լոյսի յանձնախումբներուն մէջ, և աւելորդ է ըսել թէ իր օրով շինուեցան Սիւլըր ֆարմը, կուլուզիներու նոր դրութիւնը, Սիթի Հօլը, Սըպուլը, երկաթուղեաց

քրօսինկները և անոնց կէյթերը:

Ֆօլքընսթին որ Ֆրէզնօի մէջ նուագածուաց առաջին խումբը կազմակերպեց տարիներ առաջ և որ քաղաքիս ամենանշանաւոր նուագածուներու մին է այսօր, հաս եկած է 10 տարի չափ առաջ և իր վարմունքով սիրուած ու յարգուած է ընդհանուր ժողովուրդէն:

Ֆրէզնօի Հայերը շատ մօտէն կը ճանչնան զինքը. անոր հետ առևտրական գործ ունեցող բաղմաթիւ Հայերուն հարկ չի կայ այս մասին բառ մը անգամ ըսել: Ֆօլքընսթին միւղիք ընկերութեան անդամներէն մին է ինք:

Կրանդ հայ քաղաքացիներու քուէն կը խնդրէ դարձեալ:

ԱՍԳԻԷՆ ԱՆԻԻԷՆ

Մարտ 14ի Կիրակի իրիկուն հանդէս մը տեղի ունեցաւ Այնթափայն Սրահին մէջ Ֆ. Հ. Երիտասարդաց Ակումբին կողմանէ սարքուած:

Հանդէսը սկսաւ երկոյեան ժամը 8ին, — որոշեալ ժամանակէն կէս ժամ ուշ: — Ժողովարարը խոսեցաւ էր երկուս ազգայիններով երբ ատենակապ Պ. Վարդանեանը բացաւ ժողովը: Խօսեցաւ Պատ. Սանդիկեան նիւթ ունենալով Ռուզըվէթն և իր քաղաքականութիւնը: Ընտիր կտորներ նուագեցին պնք. Գ. Քարահատեան և Վահան Էֆրէրեան, առաջինը դաշնակի իսկ երկրորդը չուծակի վրայ: Խնամով պատրաստուած և իմաստալից ճառ մը կարգաց Վարդան Յակոբեանը՝ ընտիր առօրեանութեամբ: Յ. Գապտայեանը (Պրէյվը) երկայն ճառ մը կարգաց ու ջանաց նկարագրել Ֆրէզնօի Հայոց բուն զիրքը հանդէպ Ամերիկացոց: Ճառաստին շափազանցութիւնները ցատու պատճառեցին հանդիսականաց, որոնք ո՛չ միայն քանիցս ընդմիջեցին զայն՝ այլ Տքթ. Թֆէնկճեան ու Գ. Քարահատեան քննադատեցին անոր անհարկի բացատրութիւնները:

— Յառաջիկայ շաբաթ, Ապրիլ 3, Ֆաուլըրի Հայ Զանկի Ընկերութեան կողմանէ Երեզ ներկայացում մը պիտի տրուի Ֆաուլըր Հօլին մէջ: Գերն է Արշակ Ողբերգութիւնը: Մուտքը 25 և 50 սենթ է. — փոքրիկներուն՝ 10 սենթ:

— Ֆրէզնօի Հայ Երիտասարդաց Ակումբը կը պատրաստուի շքեղ հանդէս մը տալ Հայոց Մեծ Զատիկ առթիւ: Կարող խօսողներ, ճառեր, երգեր, և չտեսնուած զուարճալի նորութիւններ տեղի պիտի ունենան ու կարմիր հակիթ պիտի բաշխուի հանդիսականներուն: — Մուտքը 15 սենթ է. տոմսերը ելած են և կը ծախուին առջամոյս վ:

* * * Եստ հիւանդութիւն կար քաղաքի մը մէջ: Տեղական բժիշկը երկու օրէ ի վեր շատ զբաղած էր: Գիշերներն անգամ քնանալու առիթ չէր կրնար ունենալ խեղճ մարդը: Աստու մը յոգնած ու քնած՝ Իրանտայի մը տունը կը կանչուի սօքթէօրը՝ Փաթըլ դարմանելու համար: Փաթըլ գէշ պաղ առած էր:

Բժիշկը հիւանդին բազկերակը քննելէ վերջ ախանջը անոր կուրծքին զբաւ ու սկսեց մտիկ ընել:

— Փաթըլ, համբել սկսեցիցս ձայնով որ շնչառութիւնդ քննեմ: Փաթըլ հարկ կսկսի—մէկ, երկուք, երեք ևն: Տօքթօրը չի կրնալով քնատութեան դիմանալ այլ ևս, գլուխը հիւանդի կուրծքին, կը քնանայ: Ու բաւական ատեն վերջ երբ կարթննայ, կը տեսնէ որ խղճակ իրատացին չը համրէ տակաւին. — տասը հազար եօթը հարիւր յիսուն ու մէկ. տասը հազար եօթը հարիւր յիսուն երկուք, ևն:

Մայրը— Մկրտիչ, ինչո՞ւ այդ խեղճ կատուին պոչէն կը քաշես. թող տուր որ երթայ:

Տղան— Մայրիկ, կատուին պոչը չեմ քաշեր, ես զայն բռնած եմ միայն, ինքն է որ կը քաշէ:

ՉԵՂՋՈՒՄԾ ԳԻՆ ՔԱՆԻՖՈՐՆԻԱ ԳԱՆՈՒ

Մարտ և Ապրիլ ամիսներու մէջ

Նիւ Եորքէն - 50,00 տոլ.	Չիքակոէն - - 33,00 տոլ.
Օմահաէն - 25,00 տոլ.	Քէնզըս Սիթիէ - 25,00 տոլ.
Սէնթ Լուիզէ - 30,50 տոլ.	Նիւ Օրլինսէն - 30,50 տոլ.

Բարեկամներդ բերել տուր Արևելքէն մեր միջոցաւ

Սրտարն Փսիփիք-Քըմքնի,

Ֆրէճնօ, ՔԱՆԻՖՈՐՆԻԱ.

ՀՕՐԻԼ ՆԱՏԻԷՕ 100 ԱՆՃՐԼԸՍ
Քալիֆորնիա

Ամենակերտնական զիրք - - - - - Չափաւոր գին
- Առաջին և Սփրինկ փողոցներուն անկիւնը -

Պ. Ի. Հէյլըրիէք Ա. Մ. Թուրթէքըր

Վայսեյիա Փրէյնիկ Միո

Իսթ և Սէնթըր փողոցներուն անկիւնը, Վայսեյիա, Քալիֆորնիա

Շէնքի մէջ գործածուելիք Միլի վերաբերեալ ամեն բան
Իուս, Պատուհան, Սիւն, զարդարանք, քաթիճաքներ և այլն են.

Թուրքա զաւառի Հայոց կը փափաքինք ըսել թէ մեզ զի-
մելով ոչ միայն դրամ կրնան խնայել այլ մենե կըստանան նոյն
ապրանքը որուն համար բարձր գին կը տրուի ուրիշ տեղ: Եկուր
տես մեզ՝ ուրիշէ գնելէ առաջ: Թէլէֆօն սէյն 72:

Ա. Բ. Գարնի

Ս. Ո. Փրէյնիկ, Տնօրէն

Էքսքըր Լըմպըր Քուքնի

- Էքսքըր, Քալիֆորնիա -

Օրէկըն Փայն, Ռէտփուտ, և Մայնթըն Փայն ատաղձ ու շէնքի
- վերաբերեալ ամեն պէտքի առարկայ: -

Եթէ Թուրքա զաւառի մէջ ունէ տեսակ շէնք շինել տալու
նպատակ ունիս՝ եկուր մեր գնեքն ալ հասկցիր ուրիշներէ գնելէ
առաջ: Դրամ կը շահիս մենե գնելով. մեր գինները աժան են:

**ՓԻԸՐՍ ԵՒ
ԷՆՏԸՐՍԸՆ,**

ԱՆՇԱՐԺ ԿԱՆՈՒՄԾ

ԵՒ

Ա. Պ. Ա. Հ. Ո. Վ. Ա. Գ. Բ. Ռ. Ի. Թ. Ի. Ի. Ն.



Թիւ 1152 ձէյ փողոց, Ֆրէճնօ, Քալիֆորնիա.

Ամեն կարգի և ամեն տեսակ հաստատուն կալուածներ կը
վաճառեն զիրին պայմաններով: Կրակի ապահովագրութեան
27 դիւաւոր ընկերութեանց տեղական ընդհանուր ներկայացու-
իչներն են այս քաղաքիս մէջ:

Օ. Մաք Հէնրի ընկերութիւն

ՄԵԾԱՔԱՆԱԿ ՄՍԱՎԱՃԱՌՆԵՐ

Պատրաստ ենք միշտ գնել ու է քանակութեամբ արջառ,
ոչխար, խոզ ևն. առաջնութիւն տալով միշտ տեղական կենդա-
նիներուն:

Կովի, ոչխարի և խոզի ընտիր միս պատրաստ ունինք ամեն
ժամանակ: Այս վէլիէ մէջ ամենաընտիր Սոսէճը կը շինենք
մենք: Գիններու համար զիմելու է մեզ:

Գրասենեակ - Այ և Ֆրէճնօ փողոցներուն անկիւնը,

- - Թէլէֆօն մէյն 270 - -

ՊԵԼ ԵՂԲԱՐՔ,

ՀԱՅՈՑ ԾԱՆՈԹ ՄԵՌԵԼԱԲԱՐՁՆԵՐԸ

Հէրիս պլաք, Ֆրէճնօ փողոց, ձէյի և Բէյի մէջտեղ.

Թէլէֆօն, - Մէյն 160, - - - - - Ֆրէճնօ, Քալիֆորնիա,

Նէշընլի Պէնք սոլ Վայսեյիա

Վայսեյիա, Քալիֆ.

Դրամադուլու 200,000 տոլար, Աւելցած և շահ 100,000 տոլար
Քլարէնս Սմիթի, Նախագահ Ս. Ճ. Կիտինկս, փոխ Նախագահ
Լ. Ս. Հայտ, Գանձապահ Լ. Լ. Լօրէնս, Օգնական Գանձապահ
Թուրքա զաւառի Հայոց դրամապահ դրամատունն է այս որ
իր հայ յաճախորդաց համակրանքը շահած է արդէն:

ՖՐԷՋՆՈՅԻ ՖԸՐՍԹ ՆԷՇԸՆԸԼ ՊԵՆՔԸ

Վճարեալ դրամադուլու - - - - - 500,000 տոլար
Աւելցած - - - - - 150,000 տոլար

Օ. Ճ. Ուուսվըրտ, Նախագահ. - Ճ. Վօկլը, Փոխ-Նախագահ
Ու. Ճ. Տիքէյ, քարտուղար. Է. Ա. Ուուրօնտ, Գանձապահ. Բօյ
Փուլիլըմ և Ճ. Ճ. Ուիլսոնթ, օգնիչ գնձապահ: Վարիչք՝ Ու. Հ.
Բրօքըր, Ճ. Վօկլը, Օ. Ճ. Ուուսվըրտ, Ու. Ճ. Տիքէյ, Է. Ա. Ուուրօնտ
Ֆրէճնօյի ամենաշին դրամատունն է ասիկա: -

U. S. Depository.

Փոխանակազիր կուտանք Խարբերգի, Էրզրումի և Օսմ. ուրիշ
դիւաւոր քաղաքներու վրայ:

ՖՐԷՋՆՈՅԻ ԻԻՆԻԸՆ ՆԷՇԸՆԸԼ ՊԵՆՔԸ

Դրամադուլու - 150,000 տոլար:

ՕՕՕ ՊԱՇՏՕՆԵՍԱՄՔ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻԻՆ ԴՐԱՄԱՏԱՆ ՕՕՕ

Ու. Օ. Մայլը, Սի. Բ. Փըքէյյար, Ու. Բ. Փրայս,
Նախագահ Փոխ-Նախգահ Գանձապահ

Բուստոֆ Ըսփրէքըլ, Ա. Պ. Բարբ, Ա. Սաքս, Ճ. Տ. Քալընս,
Ֆ. Ճի. Տաու, Ֆրէնք Բիհօրն, Ս. Լ. Ռուլթըր, Քրիս. Ճօրկնըն

- Վարձու - Սէյֆ տիփազիթ պաքսեր -

Ներքին և օտար փոխանակազիրներ

Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

Թէլէֆօն ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ Մէյն 2595
 344 ՃէՅ Փողոց, Ֆրէզնօ: Հ. ԷԿԻՆԵԱՆ, ԽՍՐԱԳԻՐ.
 Նամակ դրամ, կամ ծրար զրկել հետեւեալ հասցէին՝
To The Citizen Publishing Co.
 P. O. Box 1224. FRFSNO, CAL.

ԲՈՒՈՐ ՆՇԱՆԱՒՈՐ ՀԱՅԵՐԸ ՄԵՆԷ ԿԸ
 ԳՆԵՆ ՆԸՐՍԸՐԻ ԿԵՐԱՐԵԱՐԵԱԼ
 ԱՄԵՆ ԿԱՐԳԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ

ՅՐԷՋՆՈ ՆԸՐՍԸՐԻ

928 Ա. փողոց, Հիւզ հօթէլին դիմացը, Ֆրէզնօ, Քալիֆօրնիա.
 — Ֆ. Հ. ՈՒԻԼՍԸՆ, Սեփականատէր —
 Ամեն տեսակ Պտուղի ծառեր, որթատունկեր, շարդածառեր,
 Վարդենիներ և ամեն տեսակ տունկեր ու հունտեր
 Պատկերազարդ ցանկի տեսարակ մը ձրի կուտանք փափաքողաց:

ԱՊԱՀՈՎԵԱԼ ԷՊԸՍԹՐԷՔԹՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՏԵՂԸ

Երբոր գնելիք երկրիդ ճշգրիտ մէկ էպսթրէքթը ձեռք կը
 սերես՝ հաճելի բան մըն է գիտնալը թէ նոյն էպսթրէքթը քեզ
 տուող ընկերութիւնը վստահելի հաստատութիւն մըն է, և թէ
 ունի իր ետև գրամական կարողութիւն նոյնը ապահովելու հա-
 մար: Կարելի է այս բանը ըսել Ֆրէզնօ Քալիֆօրնիա էպսթրէքթ
 Քմբնի ընկերութեան մասին որ հաստատուած է 1871 թուին և
 ունի 100,000 տուարի վճարեալ գրամագումար: Այս ընկերութիւնս
 կուտայ երկրի մը կատարեալ էպսթրէքթը, գաւառէս դուրս բը-
 նակողներուն թէքսերը կը վճարէ իրենց հաշուոյն և 'էսքրօ' գործ-
 առնութեանց կը նուիրէ մասնաւոր ուշադրութիւն: Եթէ կը խոր-
 հիս կտոր մը երկիր գնել՝ հարիւրաւոր տուարներ կրնայ ըլլալ որ
 շահիս եթէ գնելէ առաջ այսպիսի ընկերութեան մը ստանաս նոյն
 երկրին կատարեալ էպսթրէքթը:

ԿԱՐԳԱ, ԿԱՐԳԱ, ԿԱՐԳԱ.

Առոմ Եարճանեանի (Սիամանթօ) Հայորդիները, Երբորդ
 շարք, Հոգեվարքի և Յոյսի Զահերը, կարգա: — Երբ մէյ մը
 այս քրմական Բանաստեղծին քերթուածներուն համն ու հոտը
 առնես և անոր ոճին ընտելանաս՝ ալ անկէ դիւրաւ չպիտի կըր-
 նաս բաժնուիլ: Կարելի եղածին չափ շուտ գիմէ Նազարէթ Թա-
 դէոսեանին, 166 Փ. Օ. Բօքս, Ֆրէզնօ,

Խանութի թէլէֆօն՝ մէյն 970 Տունի թէլէֆօն՝ մէյն 2284

Սի. Է. Պրօտեօր և շ Որդի
 — Վաճառական —

ՊԱՏԻ ԹՈՒՂԹԻ

Ներկել սուն, շէնք ևն. թինթ ընել և պատերը թուղթել
 Գիներ կը տրուին շատ հաճութեամբ
 2226 Թուլարա փողոց, Ֆրէզնօ, քալ.

ՊԷՆՔ ԱՎ ՍԷՆԹՐԸԼ ՔԱԼԻՖՈՐՆԻԱ

Հանրածանթ գրամատունը գրամահաշիւզ կը խնդրէ: Կ'առաջա-
 դրենք մարդավարի վարժունք, կընծայենք ամենալաւ դիւրութիւն-
 ներ և գրամական ծայրագոյն ձեռնտուութիւն՝ սեղանաւորական
 առողջ օրէնքներու համաձայն: Վարձու 'սէյֆ' տիփագիտ պարսեր.
 օտար փոխանակագրի մասնաւորութիւն:

Կրամատուն՝ Մարիփոզա փողոց, Ճէյն անկիւնը, Ֆրէզնօ:

Ֆրէզնօի Ֆարմեր'ս Նէշնլի Պէնքը

ԴՐԱՄԱԿՎՈՒԻ ՈՒ ՍԸՐՓԼԸՍ 400,000-00 Տուար
 ԱԼՖՐԷՏ ՔԸԹԵԸՐ, Նախագահ ՈՒՍԼՈՐԸ ԵՈՒՄԷՅՔԻՐ, Գանձպէս,
 Է. Է. ՄԱՆՀԷՅՄ, Փոխ Նախագահ և Տնօրէն.
 Զօրաւոր, Ապահով և պահպանողական կերպով կառա-
 վարուած գրամատուն մը

U. S. DEPOSITARY.

Անհատներու, ընկերութեանց և բարեգործներու
 — գրամահաշիւները կը հրաւիրուին —

ՄԱՔ ՆԻԸԼԻ ԱՄ ԵՆ ԱԸՆ Տ Ի Ր ՈՒ
ԽՈՏԱԻԷՏ ՓԷՍՉԸՐԸ

ԿԵՆԴԱՆԵՍՅՊ ՀԱՆ- ԳՍՏԱՎԱՅՐՆ ՈՒ ԱՐՕՏԱՏԵՂԻՆ
 Նօրթչ Էֆիելի վրայ՝ քաղաքէս վեց մղոն արևմուտք
 Երբ ձիերուդ պէտք չունիս՝ հոն զրկէ զանոնք: Ամիսը մէկ տու.
 Ընտիր մատակարարներ (այլըր) կը պահեն հոն: Անոնց ծառայ-
 ութեան գինը 10 տուար է. Թէլէֆօն Ըսթէյթ 2284

ԵՐԿԻՐ ԳՆԵԼ ՈՒՉՈՂՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Մեծ Պատեհոչքիւն կ'առաջարկուի

Ծախու ունինք պարապ և մշակուած երկիրներ. Պարապ եր-
 կիրները կը ծախենք՝ էյքըը 65, 75 և 100 տուարի. 5 տու. կան-
 խիկ, միացեալը 5 կամ 8 տարիէն վճարելի: Շատ դիւրամատչելի
 գներով կը ծախենք մշակեալ երկիրներ. պայմանները դու կրնաս
 որոշել: Ունինք 20, 40, 80 և 160 էյքընոց ընտիր կտորներ: Մենք
 երկիր գնող Բիտլիի հայերէն կրնաք հարցնել մեր մասին:

Է. Ա. Մ. ՈՒԷՊ և ՃԷՕՐՃ ՆՈՐՈՑԵԱՆ, Բիտլի, Քալ.

ԷՍ. Հեկտորյան,

Նպարեղէն, Երկաթեղէն և Երկրագործական գործիներ
 ... Վայսէլիա, Քալիֆօրնիա ...

Վայսէլիաի և շրջակայից Հայերը այս մեծ վաճառատունէն գը-
 նելով ոչ միայն ամեն բանի ընտիրը գնած կըլլան այլ գներու
 չափաւորութեանէն կօգտուին մեծապէս ու հայասէր տան մը հետ
 կապուած կըլլան: Շատ Հայեր այս վաճառատուն մնայուն յա-
 ճախորդներն են հիմայ: Առաջին անգամ զայն փորձողները ու-
 բիշի երթալու սխալը գործած չեն բնաւ: Գու՛ն ալ փորձէ, և գոհ
 պիտի մնաս ամեն կերպով:

ԷՍ. ՀԷՆՏԸՐՍԸՆ, Վայսէլիա, Քալ.

ՊՐՈՒՔՍ ԵՂԲՐՔ

1050 Ճէյ փողոց, Ֆրէզնօ, քալ. Թէլէֆօն մէյն 1004

Ասեւ տեսակ ծառ ոչ որբատունակ

Մըքէթ, մալակա, Զինֆընտէլ և այգիի ուրիշ ամեն տեսակներ
 Դեղձի, ծիրանի, թուզի, նարինջի և զարդի ծառեր
 Ամեն ապրանք որ մեքէ կը գնուի ամեն կերպիւ ապահովեալ է:
 Հայերէն շատ քիչը չին ճանչնար մեզ: Հարցուր ծանօթ
 մէկէ մը մեր տան և առևտուրի նկատմամբ այլոց երթալէ առաջ.

* * * * * Գիներ միշտ չափաւոր * * *

Վաճառատեղին — Թուլարա փոցոց, Սանթա Ֆի տիփօի մօտ

ԸՆՏՐԱԿԱՆ ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ
— Ընտրութիւն Ապրիլ 12ին, 1909 —

Սիթի Թրըսթիի Համար

Թ. Է. ՀԸՅՑ

Ֆրէզնոի առաջին ութսին կողմանէ

Սիթի Թրըսթիի Համար

Ճ. ՈՒ. ՆԻԸԼ

Ֆրէզնոի Եօթներորդ ութսին կողմանէ

Սիթի Թրըսթիի Համար

ՈՒՕԼՍԻ ՈՒԱԷՅԱՆԹ

Ֆրէզնոի Հինգերորդ ութսին կողմանէ

Սիթի Թրըսթիի Համար

ՉԱՐԼՍ ՏԻԹՕՑ


Ֆրէզնոի երրորդ ութսին կողմանէ

Սիթի Թրըսթիի Համար

Հ. Ֆ. ՄԱՐԹԻՆ

Ֆրէզնոի Հինգերորդ Ութսին կողմանէ

Սիթի Թրըսթիի Համար



ՏԱՆ ՏԻՉՄԻԻՔՍ

Ֆրէզնոի ութերորդ Ութսին կողմանէ

Ռեպարիր Եղբարք

Սան Ռոբին Վալիի գլխաւոր Գեղագործք
Զուտ դեղեր և Ֆոֆօկրաֆի պիւսոյք
Քէյ և մարիփոզա փողոցներու անկիւնը
Թէլէֆօն՝ մէյն 14 - Ֆրէզնո, Քալ.

ՍԱՆ ՈՒՕՔԻՆ ԷՊՍԹԻԷՔԹ ԲԱՄԲՆԻ
1156 Ճէյ փողոց, Ֆրէզնո, Քալ.

— Թէլէֆօն՝ մէյն 343 —

ՈՒ. Օ. ՄԱՑԸԼՍ, նախագահ, Ա. Պ. ԲԱՐԲ, փոխ-նիսգհ. ձեռքի ըսթթրիթըր, Որդի, Բարտուղար. ՖԱՐՄԸՐՍ ՊԷՆՔ, Գանձպէ.

Գրամազուլու՝ 100,000 տուար
Ամեն հողերու, ջրի և հանքային կալուածի
Էպսթրէթթներ Ֆրէզնո գաւառի Համար:
Հոս գաղով կը շահիս գրամ և ժամանակ:

Ըսրիպլըն և Զ Պիւ,

Մ Ե Ռ Ե Լ Ա Բ Ա Ր Չ Ք

1141 Ա. փողոց, Ֆրէզնո, Քալիֆորնիա.

Քորօնըրի օֆիս — Բաց է միշտ

— Տիկին սպասարկու —

Տրք. Պ. Ռիլիլըն,

— ԶԻՈՒ ԵՒ ԱՐՋԱՌԻ ԲԺԻՇԿ —

Երկարամեայ փորձառութիւն. մասնագէտ
... վիրարոյթ և ատամնարոյթ ...

Եթէ ո և է ատեն կենդանիներդ բժշկի
պէտք ունենան, ամենէ փորձառուին դիմէ:

Չի կայ երկրագործ մը որ մեզ գիմած
ու գոհ մնացած չըլլայ. Դատ հայեր կան
մեր յաճախորդաց ցանկին մէջ.

Հիւանդանոց և օֆիս — Էյ և Թուլարս
փողոցներուն անկիւնը, Ֆրէզնո.

— Թէլէֆօն՝ մէյն 309.

ՀԱՅ Հաց ՀԱՅ Հաց ՀԱՅ Հաց ՀԱՅ Հաց ՀԱՅ

Ամեն հացագործ Հաց կը պատրաստէ
Բայց **ՄՕՏԷԼ ՊԷՅԲԸՐԻՆ** է որ

ամենապատուական Հաց կարտագրէ: Հոս
կը շինուի հոշակաւոր ՊԸԹԸՐ ՆԸԹ հացը:
Հարկ չի կայ երկարաբանութեան. նկանակ
մը գնէ փորձի համար ու գատէ:

ՄՕՏԷԼ ԸՍԹԻՄ ՊԷՅԲԸՐԻ.
2037 Ֆրէզնո փողոց Թէլիֆ. մէյն 746

ՓԱՅՏ

— ԵՒ —

Ա.Շ ՈՒ Խ

Ֆրէզնո Ֆիլիլ ԲՄՆԻ,
Թիւ 102 Օ փողոց, Թէլէֆօն մէյն 299
Մեծաքանակ և Փոքրաքանակ

ՏԲԹ. Ճ. Ն. ԷՅԲԸՆ

Մասնագէտ Հինգած Հիւանդութեանց
Սենեակք Թիւ 9 և 10, Փէթըրսըն Պլաք
Ֆրէզնո — Թէլէֆօն՝ մէյն 593 — Բալիֆ.
Հիւանդ կ'ընդունի առաւօտեան
Օէն 12, կեսօրէ վերջ՝ ժամը Չէն մինչ 5.

ՏԲԹ. Պասեանի պատրաստած դեղը դողի
տենդի համար: Գինն էմէկ տուար:

ԿՕԼՏԸՆ ՐՈՒԼ ՏՐԸԿ ԸՍԹՕՐ

— Ա. ՃԷՑ ՏԻՊԷՐԹ, տէր. —


Եղեր, քիմիականներ, արդուզարդի առար-
կաներ, հոտաւոր ջուրեր, օճառներ, ևն.

1830 Մարիփոզա փողոց, Ֆրէզնո, Քալ.
Թէլէֆօն — — մէյն 347

ԱԿՈՒԱՆԵՐՈՒԴ

Հոգ տար, որպէսզի ստամոքսդ չի վնասուի:
Այսօր նորոգուելիք ակառն վաղը
Թերևս հարկադուիս կորսնցնել վերջնապէս
Եկուր մեզ տես քանի որ ուշ չէ:
մեր գիներէն նմոյշ մը

Spp. Պ. Ու. ՏՕՅԼ,



Ստամոքսը շարք մը, սոլ
Ոսկե Գրան, 92թ. Լաք 4.00
Ոսկե Եցնի, պղտիկ անեակ 1.00
Ստամոքսի անկուց քաշել 50
Քնուութիւն և Իրաձորի Են

Ֆրէզնոի ամենաառաջին ՏԷՆԹԻԱԹԸ
Առանց ցաւի ստամոքսահանութիւնը այս քա-
— դաքի մէջ տարածող անձը: —
Սենեակ 26-27-28 Ֆիլք պիլտինկ, Ֆրէզնո.
— Թէլէֆօն՝ մէյն 628 —

ՍԱՆ ՈՒՕՔԻՆ ՏՐԸԿ ԲՄԲՆԻ

Զրոյղեալ մեծ դեղարանը
1933 մարիփոզա փողոց, Ճէյի մօտ, Ֆրէզնո
— Թարմ դեղեր, զուտ դեղեր —
Դատ մեծ խնամով կը պատրաստուին հոս
դեղագիրները չափաւոր գիներով միայն.
Տեղական բոլոր դեղարաններէն աւելի Հայ
— յաճախորդներ ունեցած ենք միշտ.

ՐՕՅԸԼ ԲԱՑԷ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՃԱՇԱՐԱՆ
Թիւ 1836 արիփոզա փողոց, Ֆրէզնո.—
Չափաւոր գիներ, մաքրութիւն և ըն-
տիր խոհարարութիւն: Կարծէ փորձել:

Տանիլը Մեթաճըն Մօրիս Է. Փաւըր

ՓԱՌԸՐ և ՄԲՑԱՃԸՆ

Հայոց Փաստարաններն ի Վալսէլիա
այսէլիա Քալիֆօրնիա

ԸՆՏՐԱԿԱՆ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ
Ընտրութիւնք կըրտն Ապրիլ 42ին. 1909.

Սիթի Բըրըսթիի համար

Ու. Հ. ԲԱՅԸՆ

(այժմեան պաշտօնակալը)

Սիթի Թըրըսթիի համար

Սի. Մ. ՉԱԼԼԸԲ

(Ներկայ պաշտօնեայն)

Ֆրէզնօի երկրորդ Ուորտի կողմէն

Սիթի Թըրըսթիի համար

ԸՐՆԸՍԹ ԲԼԵԹԹԻ

(Ներկայ պաշտօնեայն)

Ֆրէզնօի երրորդ Ուորտին կողմանէ

Սիթի Թըրըսթիի համար

Ու. Հ. ԹԸԲԲԸՐ

Ֆրէզնօի երրորդ Ուորտին կողմէն.

Քաղաքապետի համար

Ճ. Տ. ԸՍԹԷՏՀԸՄ

Քաղաքապետի համար

Ճէյ Պ. ՄԱՅԸՐՄ

Որ գինետունները գոցելու կը հաւտայ

Սիթի Թըրըսթիի համար

ԿՐԱՆԿ ԾՕԼԲԸՆՍԹԻՆ

Ֆրէզնօի վեցերորդ Ուորտին կողմանէ

Սիթի Թըրըսթիի համար

ԻԻՃԻՆ Բ. ՇՍԹԻԹՀ

Ֆրէզնօի Զրորդ ուորտին համար

Պ. Մ. ՀԷԷԿ, ՈՐԴԻ

Ֆրէզնօի առաջին Ուորտին կողմանէ

Սիթի Թըրըսթիի համար

Ա. Է. ՇՄՆՕ

Ֆրէզնօ քաղաքի ութերորդ ուորտի կողմէ.

Սիթի Թըրըսթիի համար

Ճ. Ն. ԸՍՓՐՍԻԶ

Ֆրէզնօի վեցերորդ ուորտին կողմանէ

Դպրոցներու Հոգարարձուծեան համար

Ու. Ճ. ԲԻԹՈՒԸԼԼ

Դպրոցի Հոգարարձուծեան համար

Օ. Մ. ԹԱՄՍԸՆ

Օ. Տարձէլիս

Ֆրանսական

Հ ա զ ա զ ո թ ծ

1220 Բէյ փողոց, Ֆրէզնօ, Քալիֆորնիա
Փորձէ անգամ մը մեր Ֆրէնչ և կամ
Քուէյթը հացերը: Երկուքն ալ կը յարմարին
հայկական ճաշակի:

ՔԸՐԲՄԸՆ

ՆԸՐՍԸՐԻՍ

ՃԷՑ և ԲԸՐՆ ՓՈՂՈՅՆԵՐ

Ֆրէզնօ, Քալիֆորնիա

Սմեն տեսակ պտուղի ծառեր, ամեն տեսակ
խաղողի որթեր, դարդածառեր, ևն.

ԳԻՆԵՐԸ ԱՃԱՆ

ԱՊՐԱՆԲԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ

Պէնք ալ Թոշարս

Թուլարա, Քալիֆորնիա.

Վճարեալ գրամադուլտ 50,000 տուար

Յաւելում՝ 35,000 տուար

Պաշտօնեայք: Ի. Լէյթրըպ՝ նախագահ, Ճ. Կօլումբն՝ փոխնախագահ, Լ. Լ. Էպրըրօնպի՝ գանձապահ, Ու. Փ. Ուիլքմս՝ փոխգանձապահ, Վարդըներ: Ի. Լէյթրըպ, Ճ. Կօլումբն, Ճ. Հ. Մօրթըր, Տ. Պ. Մօօր, ՃօլըՄարշ Թուլարայի Հայերը տարիններէ ի վեր այդ գրամատան հետ կընեն իրենց զբանական բոլոր գործողութիւնները: Սմենապահօլ տեղն է վտահելի տեղիկութիւններ ստանալու տեղական ամեն տեսակ կալուածներու նկատմամբ:

ՀԱՅ

Մի գներ ոչրիշեկ

մեր պատրաստածները տեսնալէ առաջ
Ոչ մի հացագործ կրնայ մրցել հիմայ մեզի
հետ: Պարապ խօսք չէ աս. հինգ սէնթով
կրնաս փորձ մ'ընել և համոզուիլ:
Ուրիշներէ միս գնէ բայց մեր հացը կեր.
ՆԻԻ ԻՆԿԼԸՆՏ ՊԷՑԲԸՐԻ
Ա. Ատուրեան և Ընկ.
1323 Քըրն փողոց, Թէլէֆօն մէյն 2537

Տիպրանի Սարոյեան

-Հայ Սափրիչ-

1217 Քէյ փողոց, Ֆրէզնօ.

Աժիլել 10 սէնթ - մազ կտրել 20 սէնթ

ՈՒՂՂԱԿԻ ՖԼՕՐԻՏՍՅԷՆ ՍՏԱՅԱԾ Է
Չ Մ Ե Ր Ո Ւ Կ Ի Ը Ն Տ Ի Ր

Հ ՈՒՆ Տ

Հ Է Մ Ը Ն Տ

ՍԻՏ ՏԷՓԱՐԹՄԷՆԴ

Հիւզ Հօթելին գիմացը, Թուլարա փողոց,
- Ֆրէզնօ, Քալիֆորնիա -

Փորձէ մեր կերակուրները: Իրենց տեսա-
-կին մէջ ամենէ լաւերն են ի Ֆրէզնօ-

Իւ Էս Ճաշարանը

852 Ա. փողոց, Ֆրէզնօ.

- Ճաշի Թիքէթներ գնելով՝ դրամ խնայէ -
22 հատ 15 սէնթնոց ճաշ 3 տոլ.

11 հատ 15նոցը՝ 1.50Ի

Լեռնի Սերոյեան

-Ս Ա Փ Ր Ի Չ-

Ի գիտութիւն բոլոր հին յաճախորդներու՝ կը ծանուցանեմ որ, Սափրիչի նոր խանութ մը բացած եմ 921 Ա. փողոցին վրայ: Օտարին երթալով հաճոյք մը կըզգասք
Աժնել 10 սէնթ, մազ կտնել 20 սէնթ:

ՊԱՂՏԱՍԱՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Մանօթ Գերձակը

1151 Ա. փողոցին վրայ

Փետր. 10էն սկսեալ մինչև Ապրիլի 1^ր
Հայերու կողմէ բոլոր ինծի բերուած մաք-
րուելիք հազուատներուն հասոյթին 100-ին
30-ը Հայաստանի ուղիւց, և 20-ը ՆՊՐ
Սերունդ Թերթին կը նուիրեմ:

ՍՈՒՐ ՍԼԱՔՍԵՐ

Երեցական եկեղեցւոյ մէջ անցեալները պատահած միջադէպը խօսքի առարկայ է սակաւին: Պատ. Հայկունին այդ օր քնննադատեց իր 'նախարանով' Հայրենիքի այն յօդուածը որ կը դատափետտէր Կոչնակի մէջ հրատարակուած ծանօթ նկարագրութիւնը կրօնական զարթնումի ժողովի մը որ տեղի ունեցած էր Նիւ Եորքի մէջ բանի մը շարաթներ առաջ: Ժողովուրդը որ կատարելապէս համամիտ էր իր քարոզչի արտայայտած գաղափարներուն, միաձայնութեամբ համակրանաց քուէ մը տուաւ Կոչնակին ու իր հակակրօնութիւնը որոշեց բողոքագրով մը յայտնել Հայրենիքի խմբագրութեան: Ա. Թլխֆէնիկեան որ այդ եկեղեցիին չէր պատկանէր, միամտութիւն ունեցաւ այդ օր խառնուելու Երցականաց այս ներքին խնդրոյն, և ի հարկէ ոչ միայն իր բողոքը անլսելի մնաց այլ իր շուրջը անխորժ փոթորիկ մը յարոյց: Ուրիշներքին գործերուն խառնուելը ընդհանրապէս այսպիսի անպատեհութիւններ կը ծնին: Ամերիկացիք իրաւամբ կըսեն — մայնա էր օն պիղնես —:

— Ապահանի Եզնիկ եպիսկոպոսին մահը, ի Կ. Պօլսոյ, Ամերիկայի առաջնորդական աթոռը կրկին անգամ պարսպութեան մատնեց: Անուանական առաջնորդ մ'ալ չունինք հիմա: Հանգուցեալ եկեղեցականը եթէ Ամերիկայի մէջ կաթուածահար ըլլար՝ թերևս կարծողներ պիտի ըլլային թէ չի հաադուրժելով Ամերիկահայի ընթացքին՝ զոհ կերթար այդ սոսկալի հիւանդութեան: Արգէն ո՞վ կաթուածահար չըլլար մեր ժողովրդի բունած ընթացքին առջև: Եպիսկոպոսին մէկը ըսած է եղեր ժամանակին՝ թէ հայ ժողովուրդը փայտէ շուն կուզէ, որ հաչէ բայց չուտէ:

— Վահան Ալունեան որուն պատկերը քաղաքիս առաւօտեան թերթը հրատարակած էր անցեալ շաբթու գողտրիկ գալաբանականով մը, հսկայ քայլեր կառնէ իր արուեստին մէջ: Բնական մեծ ձիւք ունի մեր Վահանը վրձին գործածելու: Կերևի թէ Ֆրէզնօի Հայ գաղութը նոր Ալվազովրդիկներ պիտի արտադրէ օր մը: Մաթթենք և յուսանք:

— Տեղական դատարաններու մէջ ամուսնալուծութեան դատ մը կը քաշքշուի նորէն այս օրեր: Պօղոս Առաքեալի ըսածին պէս՝ մէկը չի կայ այս ժողովրդին մէջ որ հաշտեցնէ այս զոյգը:

— Ընտրութիւնները կը մօտենան, մեր լուսահոգէ՛ Բաղաքական ակումբը գործօն քայլ մը առնել պիտի ուզէ՛:

— Չամիչը սկսած է մեծ յուսահատութիւն պատճառել այդեպաններուն: Անոնց վերջի փորձերը դեռ գործնական արդիւնք մը յառաջ չի բերին: Յոյսով կասլի այդեպանը չամիչի կուտին վրայ:

Ծ Ա Ռ Ո Ւ
Վաճառելի Սմեն Տեսակներէ
Դ Ե Ղ Ձ Ի Ծ Ա Ռ Ե Ր
Ո
Խաղողի որթատուցիկեր
Չ Ա Ր Դ Ի Ծ Ա Ռ Ե Ր
Գիները չափաւոր. մեծաքանակ գնողներու համար առանձին սակագին
Ք. ՆԱԲԱՌԻՐԱ ԵՂՔԱՐՔ
ՆԵՐՍԸՐԻ. Օթիս 1414 Քըրն փողոց, Ի և Էֆ փողոցներուն մէջտեղը, Ֆրէզնօ, քալ.
— Թէլֆօն մէյն 3071 —

ԱՌՉԻՊՈՒՔ
ԷՄՓԼԻՄԷՆՑ
Ք ր մ ք ն ի ն

— 915-917 ձէյ փողոց, Ֆրէզնօ —
Այս ծանօթ տունը՝ կը վաճառէ երկրագործական ամեն անակ մեքենայ, կառք գործիք, հարնէս ջրհան ևն. ևն. շատ չափաւոր գներով ու գիւրին պալմաններով:

Ճան Տիրի գործիքներն
— Ո Ւ —

* * ԳԻԹԸՐ ԵԸԹԸԼԻ ԿԱՌԻԵՐԸ * *
* * միայն մեր քով կը ծախուին * *
Լաւը միշտ աժան է եթէ սովորականէն աւելի ալ վճարես անոր, բայց մեր գիները բարձր չեն բնաւ: Եկուր սես մեզ գնելէ առաջ, կամ մեր հայ յաճախորդներէն ունէ մէկին հետ գնա տեսնուէ՛ այս մասին:

սևնի գնես յաշք կը գնես

• Բ. ՀԻԿԻՆՍ Թէլֆօն Բէա 157
1156 Ս. ՔԵԷՄՊՐԷՏՔ Ֆրէզնօ, քալ.
Նահանգիս ամենաառաջնակարգ տուններէ մին որ կը լուսանկարէ ամեն ինչ՝ վերջին կատարելագործութեանց համաձայն . . .
Մասնաւորութիւն՝ պատկեր մեծցնել, արթիւթ փրօւֆ, տեսարան և խումբեր զծել:

Փիփըլ'ս Մարքիթ
Ճ. Թ. Մորկըն
Մէյն փողոց, նախկին թատրոնին տեղը,
— Վայսելիա, քալիֆօրնիա —
Սմեն տեսակ թարմ և պատրաստուած միս Սօսէն, պէյթըն, հէմ, լոտա ևն. ևն
Գիները միշտ չափաւոր են.

ԸՆՏՐԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՒՒՔ
Ընտրութիւնք կը կատարուին Ս. պրիւ 12, '09

Քաղաքագետի համար
ՈՒ Ֆ. ԹՈՒՄԻ

Սիթի Թրըսթիի համար
Ս. Հ. ՓԷՐԻՇ
Ֆրէզնօի եօթներորդ Ուօրտին կողմանէ

Ոստիկանական Դատաւորի համար
Հ. Ֆ. ՊՐԻԿՍ
(Այժմեան Դատաւորը)

Ոստիկանական Դատաւորի համար
ՖՐԷՆԻ ԼԷՆԻՆԿ

Սիթի Թրըսթիի համար
Ս. Ճ. ՊԸՐԼԻՅ
Ֆրէզնօի երկրորդ Ուօրտին կողմանի

Սիթի Թրըսթիի համար
Ճ. Ս. ՓԱԹԹԸԼ
Ֆրէզնօի երկրորդ Ուօրտին կողմանի

Սիթի Թրըսթիի համար
Տ. Հ. ՈՒԻԼԻԸՄՍ
Ֆրէզնօի ութերորդ Ուօրտին կողմանէ

Սիթի Թրըսթիի համար
Ս. Լ. ՄԵՆԵԸՐ
Ֆրէզնօի առաջին ուօրտին կողմանէ

Դպրոցներու Հոգաբարձութեան համար
Ճ. Ֆ. ԿՈՒԻԸՄԷՆ

Դպրոցներու Հոգաբարձութեան համար
Լ. Լ. ԱՐՉԻՊՈՒՏ

Սիթի Թրիսթիի համար
ՃԷՕՐՃ ՓԻՔԸՐՏ
Ֆրէզնօի եօթներորդ Ուօրտին կողմանէ

ԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅԻՍ

Տան Տիգրիւքս .— Քաղաքիս Հայաշատ շրջանակը ներկայացնող ճրդ ուօրտէն Սիթի Թրքսթիի Թեկնածու է Տան Տիգրիւքս, որ երկայն ու հետաքրքրական պատմութիւն մը ունի: Չափազանց ազատական, լաւ էս է ըսել արմատական գաղափարներ ունեցող անձ է ինք, ժողովրդի աղքատ դասակարգին հետ խառնուող ու դանձնք մօտէն ճանչցող մէկը, որ իր յախուռն ընթացքով, անկերտակազ ազատականութեամբ շատ բարեկամներ ու շատ ալ թշնամիներ շահած է իր շուրջը: Տան ծնած է 1862-ին Թէքքա Նահանգի Սնմեր գաւառին մէջ, ու 12 տարեկան եղած ատեն Հոս եկած է իր ծնողաց հետ, Հոս կրթուած, Հոս մեծցած ու դարգացած է քաղաքիս հետ միասին: Գայրոցէն ելնելէ վերջ երիտասարդ Տիգրիւքս տարբեր դրաժմունքներով պարսպած է: Բայց տասը ասար տարիի չափ առաջ թէքս քըլէքթըր Հէնքաք գոյն իրեն օգնական կարգեց: Տիգրիւքս այդ պաշտօնը վարեց 8 տարի՝ գոչ թողով իր վերագոս պաշտօնեայն ու ժողովուրդը: 8 տարի առաջ վարժարանաց հոգաբարձու ալ ընտրուեցաւ Տիգրիւքս ու վարեց այդ պաշտօնն ալ 8 տարիի չափ: Իր այս պաշտօնավարութեան միջոցին յանդուգն Տան փոթորիկներ յարոյց հոգաբարձութեան մէջ, իր շնորհիւ էր որ հոգաբարձութիւնը յանձն առաւ վերջապէս անոր շրջանակին մէջ կառուցանել Հանրային այն փառաւոր վարժարանը որուն տեղ սղեղ ու պղտիկ շէնք մը պիտի կառուցուէր "Հայ և ուրիշ օտար ազգերուն" համար՝ եթէ Տիգրիւքս այս "օտարական" տարբերուն դատը չի պաշտպանէր ամբողջ ժողովին դէմ: Այդ վէճերու պատմութիւնները արձանագրուած են ժամանակի թերթերուն մէջ և թերև թարմ են շատ մը Հայերու համար:

Տիգրիւքսի հակառակորդներու մէջ գլխաւոր տեղ կը բռնէ Բիփըլիքըն լրագիրը: Անոր խմբագիրը՝ 8 տարի առաջ, կը ձեռնարկէր այն պաշտօնին որուն Տիգրիւքս ընտրուեցաւ հսկայ մեծամասնութեամբ: Բաւու շատ դէշ զգաց այդ պարտութեան համար որուն ազգեցուցիչներ անցած չէ տակաւին: Բիփըլիքըն մինչև Հիմայ խոշորացոյցով ջանացած է նայել Տիգրիւքսի բոլոր պակասութեանց վրայ: Անոր դէմ եղած ամենէ մեծ ամբաստանութիւնը խմբին է: Կը յիշուի անշուշտ թէ անկամ մը Տիգրիւքս արբեալ վիճակի մէջ զնացած էր Հոգաբարձութեան ժողովին և այն յարակից պարագաները որք ծնունդ տուին այդ խնդրէն: Բիփըլիքըն մատի փաթթոց ըրաւ այդ միջադէպը որ տակաւին Տիգրիւքսի երեսին կը դարձուի երբ առիթ մը ներկայանայ: Գայթակղած էին: Սակայն Տիգրիւքս, որ Քրիստոսի եկեղեցուց կը վերաբերի իր ընտանեօք միասին, չուրացաւ իր յանցանքը և չուրանար այսօր թէ երբեմն կը խմբի չափաւոր կերպիւ (բաւական ատենէ ի վեր ոգիւնից ըմպելիքէ հրամարած է բոլորովին) բայց կը հատալ թէ սեղի պատուաւոր ու վստահելի են անոնք որոնք գաղտնի չեն արբենար ու իրենք գիտենք չեն պահեր կեղծիքի ու սուտի ետև:

Տիգրիւքս ժողովրդի մարդ է. ազնուապիտակամտութեան հովիւր չի կան իր մէջ: Կը սիրէ, կը յարգէ ուղիղ մարդը հոգ չէ թէ ինչ ազգի վերաբերի այն. զայն մօտէն ճանչցողներ կրնան վկայել այս մասին, և շատ հայ ծանօթներ ունի: Եթէ Տիգրիւքս յաջողի այս ընտրութեան մէջ, ճրդ շրջանակի ժողովուրդը կրնայ վստահ ըլլալ թէ կարող, կարուկ, անկաշառ և ուրիշին խաղալիք ըլլալու գիւրութենէ զուրկ մէկը ունեցած կըլլայ Պօրտին մէջ, որ ցաւալի է ըսել թէ անհոգութեամբ վարուած է ճրդ ուօրտին հետ, որ կուուող, յամառ և յանդուգն ներկայացուցիչի մը պէտք ունի:

Տիգրիւքս կրնայ այդ մարդը ըլլալ և Հայոց քուէն կը խնդրէ յաջողելու համար:

ԿԱՎՈՇԻՆ ՍԻՆԱԿՐ

Սպարէզը քաւթառ Հաճի Պապա մը ունի, որ թէև գիտեմ որ բարի պատուէն է բայց չեմ ուզեր մատնանիշ ընել: Այս օրերս մեր պապան իր գլխէն վեր սկսեր է բաներ մը գրել՝ խորհելով թէ թափանցիկ քօղին ետևէն չեմ կրնար անոր գիմագիծը տեսնել, բայց վստահ եղիք գիտեմ զայն ու անոր բերանին չափը պիտի տամ երբ ժամանակը գայ: Անցեալ անգամ մեր քաւթառը իր սղորմելի անկիւնը լեցուցած էր անտպագրելի հայհոյութիւններով: Հոն՝ անոր թօփալ գրչակէն թոյն ու անձնական կոյր ատելութիւն կը հոսէր: Մագրիս թիք թիք կայնեցան երբ կարգացի այդ տողերը. հայ տաւերով այդպիսի հայհոյութիւն տպագրուած չէր ասկէ առաջ: Իրաւ որ աշխօսան Հաճի Պապային: Անոր գրածները ըսելու եմ թէ պատասխան ըլլալու հովերը ունին իմ անմեղ ու սուր սլքաներու և Քաղաքացիի վարպետ գիտողութիւններուն, բայց ինչ պատասխան: Սնանկ մտքերը երբ վիճարանութեան մէջ ըսելիք չի գտնեն ու զայրոյթը սիրտերնին կրծել սկսի, քիւֆուրի և անհատականի կը դիմեն: Հաճի Պապան նոյն բանը ըրած էր: Չի դարձնայ բնաւ. քանզի այս — սէօզմ օնա — զուարթարանին (՞) գատարկ գլուխը ամէնքս ալ գիտցոնք Հիմայ. անկէ արտագրուածները "անկիւն" կոչուած քիւֆէին շատ կը վայելէին անտարակոյս: Չէօմէք իւվարանմը զափաղընը պուրմը: Սակայն, մարդ Աստուծոյ, քիւֆուր ընելուն ալ քաղաքավար կերպը կայ: Քու լեղուդ սրիկաներն ալ կրնայ կարմրցնել: Անոր յարմար տեղը սակայն փոշոցն է, և եթէ "անկիւն" անուանուած տեղը փողոց կը նկատես՝ խօսքս ետ կառնեմ ու ներողութիւն կը խնդրեմ: Սակայն հայացող շունը չի խածներ կըսեն՝ մինչև որ կոնակի չի դարձունես իրեն: Օր մը հարցում եղած է սա հաջացողին թէ ինչու կը հաջէր, պատասխանած է թէ ուրիշները վախցնելու համար. հոպա ինչու պոչը կը շարժես. — Վախնալուս համար, ըսած է անկեղծութեամբ: Այս խելացի առակը շատ կը յարմարի ներկայ պարագային. բայց թէմսիտէ խաթս օրմալ կըսեն տաճիկները:

Երէկ բարեկամ մը կը հարցնէր թէ ինչ պատասխան պիտի տայի Սպարէզի այս քաւթառին, և թէ ինչ շրով պիտի լուայի զայն: Պատասխանեցի իրեն թէ ես չէի կրնար և պէտք չունէի պատասխանելու, քանզի այդ խելագարի գրածները պատասխանի չէին կարօտեր: Անոնց պատասխանը նոյն անկիւնի մէջ արձանագրուած էր արդէն: Եւ շիտակը ըսելով ես Հաճի պապային հետ տոպրակը չեմ մտնար և ոչալ հոտած ցեխին քար կը նետեմ, քանզի մարդուս վրան կը ցատկէ ան ու հանգերձները կաղտուտէ. բայց մի ալ կարծեք թէ բոլորովին վաղ պիտի անցնիմ այդ դիմակուտորի օձիքէն. սպասենք և տեսնենք թէ ասպզան ինչեր կը ծնի: Եւ ըսեմ թէ Կավոշը Պապաներու աստիճանին չի խոնարհիր, իր ըսելիքը մարդու պէս գիտէ ըսել. չի կեղծեր և ոչ ալ անձնականի կը դպի: Թող տանք սակայն Հիմայ մեռելներուն որ իրենց մեռելները թաղեն:

Անցեալները, կը գրեն Ամերիկեան թերթեր, Նիւ Ճէրզի Նահանգի խնդրանոցներէ մէկէն ազատ արձակուեցաւ խելագարին մէկը՝ ատենախօսութիւն մը ըրած ըլլալուն պատճառաւ: Մեղ զարմանալի չի թուիր այս միջադէպը, զի մեր այս հայ գաղութին մէջ կը գտնուին ատենախօսներ որոնք խնդանոց զրկուելու են իրենց ատենախօսութիւններուն համար: Վայ քեզ քաղաք որ թաղաւորդ մանուկ է: